9
ՄԱՐՏԻ
2021

Luys Լույս

ERDSC

ԵՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (2016-2020ԹԹ.)

ԵՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (2016 –2020ԹԹ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

2. ԵՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 4

3. 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ, ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ, ԳՈՐԾՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ 7

4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ 11

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳՀՀ	Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիր
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՀԸԳՀ	ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏՀՋԱԿ	«Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև հարաբերությունները ձևավորվել և սկսել են զարգանալ Հայաստանի անկախության առաջին իսկ օրվանից: ԵՄ հետ համագործակցությունը մշտապես եղել է Հայաստանի արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Այս համագործակցության առաջին իրավական հիմքը դրվեց 1996թ. ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված և 1999թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրով (այսուհետ՝ ԳՀՀ): Համաձայնագիրը ընդգրկում էր համագործակցության լայն շրջանակ՝ ներառելով տարբեր ոլորտներ՝ քաղաքական երկխոսություն, ժողովրդավարություն և մարդու իրավունքների պաշտպանություն, առևտուր և ներդրումներ, օրենսդրական և մշակութային համագործակցություն և այլն: Այս համագործակցությունը ենթադրում էր նաև համապատասխան ոլորտներում ՀՀ օրենսդրության մոտարկում ԵՄ չափանիշներին և իրավական կարգավորումներին:

Քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումներին աջակցելու նպատակով 2004 թվականին ԵՄ-ը մշակեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը՝ ընդգրկելով Հայաստանին այդ քաղաքականության շրջանակներում: Հայաստանի ընդգրկումը Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ հարաբերությունները տեղափոխեցին որակական նոր մակարդակ՝ գործընկեր և համագործակցող կարգավիճակ ունեցող երկրից Հայաստանը դարձավ ԵՄ հարևան երկիր:

2015թ. ԵՀՔ-ի վերանայումը փոփոխություն մտցրեց համագործակցության շրջանակում և հարևան երկրներին առաջարկվեց առավել արդյունավետ գործընկերություն կառուցելու ուղիներ՝ հաշվի առնելով աշխարհում և տարածաշրջանում տեղի ունեցած զարգացումները և փոփոխությունները:

2015 թվականը կարելի է համարել ԵՄ-Հայաստան փոխհարաբերությունների շրջադարձային տարի, քանի որ նույն թվականին մեկնարկեցին նաև Հայաստանի և Եվրամիության համագործակցության նոր շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունները, որն ավարտվեց 2017 թվականին Բրյուսելում ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ստորագրությամբ:

2018թ. հունիսի 1-ից, համաձայն ՀԸԳՀ 385-րդ հոդվածի դրույթների, Համաձայնագիրը ժամանակավոր ուժի մեջ մտավ (մինչև ԵՄ անդամ երկրների խորհրդարանների կողմից դրա վավերացումը), և սկսվեց նրա դրույթների մասնակի կիրարկումը: Արդեն իսկ ավարտվել է ԵՄ անդամ երկրների կողմից համաձայնագրի վավերացման

գործընթացները և այն ամբողջապես ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 1-ից: ՀԸԳՀ-ն փոխարինելու եկավ դեռևս 1996 թվականին ստորագրված ԳՀՀ-ին և դրա գործողությունների ծրագրին:

ԵՄ-ն աջակցում է ԵՀՔ նպատակներին հասնելու գործընթացին քաղաքական երկխոսության և մի շարք այլ գործիքների միջոցով, ներառյալ ֆինանսական աջակցությունը և տեխնիկական համագործակցությունը: ԵՀՔ-ի իրականացման ֆինանսական աջակցության հիմնական գործիքը Եվրոպական հարևանության գործիքն է (2014-2020 ժամանակահատվածի համար), որը փոխարինում է 2007 թվականից գործող Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքին: 2021-2027 թվականների համար ԵՄ-ն արդեն իսկ մշակել է ֆինանսական նոր գործիքի առաջարկությունը (հարևանության, զարգացման և միջազգային համագործակցության գործիք), որը նախատեսվում է ընդունել 2021 թվականին:

Եվրոպական միությունը ՀՀ-ին աջակցությունը հիմնականում տրամադրում է Եվրոպական հարևանության գործիքի ներքո՝ յուրաքանչյուր տարի երկրի հետ կնքված տարեկան գործողությունների ծրագրին համապատասխան: Այդ գործողությունների ծրագրերով սահմանվում են ԵՄ կողմից աջակցության ոլորտները և աջակցության տրամադրման ձևաչափերն ու մեխանիզմները, որոնք ներառում են նաև այնպիսի գործիքներ (ծրագրեր), ինչպիսիք են, օրինակ՝ Թվինինգը, Թայեքսը, Սիգման, Սոսյուն և Բյուջետային աջակցությունը:

Մեր նախորդ հետազոտություններում արդեն անդրադարձել ենք ԵՄ աջակցության ծրագրերին՝ ներկայացնելով դրանց շրջանակներում իրականացված և իրականացվող աշխատանքները: Սույն փաստաթղթում մանրամասն կանդրադառնանք ԵՄ ֆինանսական օժանդակության հիմնական տեսակին՝ բյուջետային աջակցությանը և դրա ներքո ՀՀ-ում իրականացվող ծրագրերի ընթացքին:

2. ԵՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բյուջետային աջակցությունը ԵՄ ֆինանսական օժանդակության գործիքներից է, որի շնորհիվ ԵՄ-ն օգնում է գործընկեր պետությանը՝ բարելավելու ոլորտային պետական քաղաքականությունները, ինչպես նաև քաղաքականություն իրականացնելու կարողություններն ու ռեսուրսները: Այն ներառում է՝

ա) երկխոսություն գործընկեր երկրի հետ՝ համաձայնեցնելու այն բարեփոխումները, որոնց կարող է նպաստել բյուջետային աջակցությունը,
բ) գրանցված առաջընթացի գնահատում,
գ) արդյունքների արձանագրումից հետո ֆինանսական փոխանցումներ գործընկերոջ պետական գանձապետական հաշվին,
դ) աջակցություն կարողությունների զարգացմանը:

Բյուջետային աջակցությունը վերջին տասնամյակում եղել է ԵՄ կողմից Հայաստանին տրամադրվող օժանդակության հիմնական եղանակը: Այն ներառում է ուղիղ ֆինանսական փոխանցումներ ՀՀ պետական բյուջե, որտեղ դրանք այնուհետև կարող են կառավարվել ազգային համակարգերի միջոցով:

Սակայն բյուջետային աջակցությունը միայն ֆինանսական աջակցություն չէ: «Հասանելի դարձնելով ֆինանսական միջոցները և քաղաքական երկխոսության մեջ ներգրավելով՝ ԵՄ-ն աջակցում է գործընկեր երկրին հզորացնել իր բյուջետային կարողությունները, սահմանել համապատասխան քաղաքականության թիրախներ, կապվել իրատեսական բյուջետային ծրագրերի հետ և բազմաթիվ ոլորտներում (կրթություն, արդարադատություն, գյուղատնտեսության և գյուղական զարգացում, սննդի անվտանգություն, հանրային կառավարում, կոռուպցիայի դեմ պայքար և հանրային ֆինանսների կառավարում) քաղաքականության իրականացման համար ներդնել համապատասխան մոնիտորինգային համակարգեր:

Ի տարբերություն միջազգային այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող բյուջետային աջակցությունների, որոնք իրենցից ներկայացնում են վարկային միջոցներ և երկրները պարտավորվում են որոշակի ժամանակ անց վերադարձնել դրանք համապատասխան տոկոսներով, ԵՄ կողմից տրվող բյուջետային աջակցությունը դրամաշնորհ է, անհատույց հատկացում երկրին՝ սահմանված բարեփոխումների օրակարգի իրականացման դեպքում: Այսինքն՝ բյուջետային աջակցությունը տրվում է նախատեսված արդյունքներն ապահովելու պարագայում

Մասնավորապես, բյուջետային աջակցությունը ենթադրում է ֆինանսական ռեսուրսների փոխանցում գործընկեր երկրի գանձապետարան՝ վերջինիս կողմից պայմանագրով սահմանված նախապայմանների կատարումից հետո: Գումարը փոխանցվում է եվրոյով, որն ազգային արժույթի փոխարկելուց հետո երկրները կարող

են օգտագործել ներքին հանրային ֆինանսների կառավարման համակարգով նախատեսված կարգով:

Բյուջետային աջակցությունը սովորաբար բաղկացած է *հաստատուն (ֆիքսված)* և *փոփոխական* տրանշներից: Հաստատուն տրանշը տրվում է բյուջետային աջակցության վերաբերյալ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ ընդհանուր պայմանների ապահովման դեպքում: Ընդհանուր պայմանները ներառում են.

- ***Պետական քաղաքականություն***. համապատասխան պետական քաղաքականության (ռազմավարության) իրականացման բավարար առաջընթաց և դրա ու դրան հաջորդող ռազմավարության շարունակական հուսալիություն ու համապատասխանություն;
- ***Մակրոտնտեսական.*** հուսալի և կայունությանն ուղղված համապատասխան մակրոտնտեսական քաղաքականության ապահովում կամ առանցքային հաշվեկշիռների վերականգնման ուղղությամբ արձանագրված առաջընթաց;
- ***Պետական ֆինանսների կառավարում***. պետական ֆինանսների կառավարման բարելավմանն ուղղված ծրագրի իրականացման բավարար առաջընթաց;
- ***Բյուջեի թափանցիկություն***. հասանելի, ժամանակին, համապարփակ և պատշաճ բյուջետային տեղեկատվության հանրային մատչելիության ուղղությամբ բավարար առաջընթաց:

Փոփոխական տրանշների հատկացումը, ի լրումն ընդհանուր պայմանների, պայմանավորված է կատարողականի հատուկ ցուցանիշների ապահովումից (փոխանցման համար նախատեսված նախապայմանների կատարումից): Այս հատկացումների կատարողականի ցուցանիշները սահմանվում են բյուջետային աջակցության ֆինանսական համաձայնագրի «Տեխնիկական և վարչական դրույթներում»: Կախված բարեփոխման ծրագրի բարդությունից, փոփոխական տրանշի կատարողականի ցուցանիշները կարող են տատանվել 3-ից 10-ի միջակայքում: Ցուցանիշների հետ մեկտեղ սահմանվում են նաև յուրաքանչյուր տարվա թիրախները, չափման միավորները և պարբերականությունը, գնահատման մեթոդաբանությունը, կատարված աշխատանքի մասին տեղեկատվության ներկայացման պարբերականությունը, տեղեկատվության հավաքագրման աղբյուրները և այլն:

Փաստաթղթով սահմանվում են նաև փոփոխական տրանշների հաշվարկման մեթոդաբանությունը՝ կախված տվյալ տրանշի փոխանցման ծավալը որոշող նախապայմանների կատարման աստիճանից: Փոփոխական տրանշների դեպքում հնարավոր է կիրառել մասնակի փոխանցում, ինչը սակայն վկայում է, որ չի կատարվել նախապայմաններից մեկը կամ մի քանիսը, կամ դրանք կատարվել են մասամբ:

Փաստաթղթով ներկայացվում է նաև յուրաքանչյուր թիրախի կշիռը, որի շնորհիվ էլ որոշվում է յուրաքանչյուր տրանշի փոխանցման ենթակա վերջնական գումարը:

Այսպիսով, յուրաքանչյուր տարվա փոփոխական տրանշի ներքո հատկացվելիք գումարի չափը, կարելի է ասել, որոշվում է հետևյալ բանաձևով՝

*Հատկացվելիք գումար = VT χ Σ [S*W], որտեղ՝*

VT – փոփոխական տրանշի նախատեսված գումարն է,
S – նախապայմանի կատարման համար տրվող միավորը,
W – յուրաքանչյուր թիրախի պայմանական կշիռը:

Նախապայմաններից որևէ մեկը չկատարելու կամ ոչ ամբողջական կատարելու դեպքում լիազոր պետական մարմինն իրավունք ունի խնդրելու եվրոպական կողմից հետաձգել տվյալ նախապայմանի իրականացումը: Սակայն դա պետք է կատարվի նախապես՝ համապատասխան հիմնավորումների առկայությամբ:

Յուրաքանչյուր տարվա փոփոխական տրանշի հատկացման համար սահմանված պայմաններին համապատասխանությունը ստուգվում է ԵՄ կողմից իրականացվող արտաքին վերանայման առաքելությունների կողմից: Միայն այդ առաքելությունների զեկույցների և պետական լիազոր մարմնի կողմից ներկայացված կատարողական զեկույցների համադրումից հետո է ԵՄ-ը որոշում հատկացվելիք գումարի չափը:

Ամփոփելով՝ բյուջետային աջակցությունը բաղկացած է հաստատուն և փոփոխական տրանշներից: Հաստատուն տրանշը տրվում է համապատասխան համաձայնագրի ստորագրումից հետո, իսկ փոփոխական տրանշի հատկացման գումարի չափը կախված է երկրի կողմից ստանձնած նախապայմանների կատարման աստիճանից: Նախապայմանների թերի կատարելու կամ չկատարելու դեպքում փոփոխական տրանշի գումարը, այսինքն ՀՀ պետական բյուջեին տրվող դրամաշնորհի գումարը, կարող է նվազեցվել:

3. 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ, ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ, ԳՈՐԾՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ

Ընդհանուր առմամբ 2007 թվականից մինչ օրս ՀՀ-ում իրականացվել է բյուջետային աջակցության 14 ծրագիր: Հաշվի առնելով սույն ուսումնասիրության ընդգրկման ժամանակահատվածը՝ այս հատվածում մենք կանդրադառնանք միայն այն բյուջետային աջակցության ծրագրերին, որոնք իրականացվել են 2016 թվականից սկսած: Դրանք ներառում են նաև այն բյուջետային աջակցության ծրագրերը, որոնք մեկնարկել են մինչև 2016 թվականը, սակայն պարունակել են գործողություններ, որոնք պետք է իրականացվեին 2016 թվականին: Այդպիսի բյուջետային աջակցության ծրագրերը թվով 9-ն են՝

- COVID-19 համավարակի դիմակայման Հայաստանի պայմանագիր,
- Աջակցություն Հայաստանում արդարադատության համակարգի բարեփոխումներին - փուլ 1,
- Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում,
- Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր,
- Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար,
- Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը,
- Աջակցություն գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը,
- Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին - փուլ 2,
- Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին - փուլ 2:

1. Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին - փուլ 2

Ծրագրի իրականացման ֆինանսական համաձայնագիրը ԵՄ հետ ստորագրվել է 2013 թվականին, ըստ որի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 29 մլն եվրո, որից՝

- Բյուջետային աջակցություն՝ 25 մլն եվրո, որից՝

- *հաստատուն տրանշ – 0 մլն եվրո,*
- *փոփոխական տրանշ՝ 25 մլն եվրո;*

- Լրացուցիչ աջակցություն՝ 4 մլն եվրո:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2014-2018 թթ.:

2. Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին - փուլ 2

ԵՄ հետ այս աշխատանքների կատարման ֆինանսական համաձայնագիրը ստորագրվել է 2012 թվականին, այնուհետև թարմացվել 2014 թվականին: Ըստ թարմացված համաձայնագրի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 45 մլն եվրո, որից՝

- *Բյուջետային աջակցություն՝ 36.8 մլն եվրո, որից՝*
  - *հաստատուն տրանշ՝ 8 մլն եվրո,*
  - *փոփոխական տրանշ՝ 28.8 մլն եվրո;*
- *Լրացուցիչ աջակցություն՝ 8.2 մլն եվրո:*

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2012-2017թթ.:

3. Աջակցություն գյուղատնտեսության և գյուղի զարգացմանը - Հայաստանի Հանրապետությունում Գյուղատնտեսության և գյուղի զարգացման եվրոպական հարևանության ծրագիր

Ֆինանսական համաձայնագիրը ստորագրվել է 2014 թվականին, ըստ որի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 25 մլն եվրո, որից՝

- Բյուջետային աջակցություն՝ 20 մլն եվրո, որից՝
  - *հաստատուն տրանշ՝ 6 մլն եվրո,*
  - *փոփոխական տրանշ՝ 14 մլն եվրո;*
- Լրացուցիչ աջակցություն՝ 5 մլն եվրո:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2015-2018թթ.:

4. Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը

Ֆինանսական համաձայնագիրը ստորագրվել է 2015 թվականին, ըստ որի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 17 մլն եվրո, որից՝

- Բյուջետային աջակցություն՝ 15.7 մլն եվրո, որից՝
    - *հաստատուն տրանշ՝ 4.2 մլն եվրո,*
    - *փոփոխական տրանշ – 11.5 մլն եվրո;*
- Լրացուցիչ աջակցություն՝ 1.3 մլն եվրո:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2016-2019թթ.:

5. Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար

Ֆինանսական համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականին, ըստ որի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 15 մլն եվրո, որից՝

- Բյուջետային աջակցություն՝ 13 մլն եվրո, որից՝
    - *հաստատուն տրանշ՝ 0 եվրո,*
    - *փոփոխական տրանշ՝ 13 մլն եվրո;*
- Լրացուցիչ աջակցություն՝ 2 մլն եվրո:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2017-2020թթ.:

6. Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր

Ֆինանսական համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականին, ըստ որի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 10 մլն եվրո, որից՝

- Բյուջետային աջակցություն՝ 8 մլն եվրո, որից՝
    - *հաստատուն տրանշ՝ 0 եվրո,*
    - *փոփոխական տրանշ՝ 8 մլն եվրո;*
- Լրացուցիչ աջակցություն՝ 2 մլն եվրո:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2017-2019թթ.:

7. Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում

Ֆինանսական համաձայնագիրը ստորագրվել է 2017 թվականին, ըստ որի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 20 մլն եվրո, որից՝

- Բյուջետային աջակցություն՝ 12 մլն եվրո, որից՝

- *հաստատուն տրանշ՝ 0 եվրո,*
- *փոփոխական տրանշ՝ 12 մլն եվրո*;

- Լրացուցիչ աջակցություն՝ 8 մլն եվրո;

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2017-2021թթ.:

8. Աջակցություն Հայաստանում արդարադատության համակարգի բարեփոխումներին - փուլ 1

Ֆինանսական համաձայնագիրը ստորագրվել է 2020 թվականին, ըստ որի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 30 մլն եվրո, որից՝

- Բյուջետային աջակցություն՝ 27 մլն եվրո, որից՝
  - *հաստատուն տրանշ՝ 9 եվրո +3.6մլն եվրո+3.6մլն եվրո,*
  - *փոփոխական տրանշ՝ 10.8 մլն եվրո;*
- Լրացուցիչ աջակցություն՝ 3 մլն եվրո:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2020-2022թթ.:

9. COVID-19 համավարակի դիմակայման Հայաստանի պայմանագիր

Ֆինանսական համաձայնագիրը ստորագրվել է 2020 թվականին, ըստ որի.

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 30 մլն եվրո, որից՝

- Բյուջետային աջակցություն՝ 30 մլն եվրո, որից՝
  - *հաստատուն տրանշ՝ 24 եվրո,*
  - *փոփոխական տրանշ՝ 6 մլն եվրո;*
- Լրացուցիչ աջակցություն՝ 0 եվրո:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2020-2021թթ.:

4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Նախքան բյուջետային աջակցության վճարումների ուսումնասիրությունը, ներկայացնենք վճարումների իրականացման սկզբունքը: Ըստ բյուջետային աջակցության ծրագրերի ուղեցույցի՝ վճարումը կատարվում է տվյալ տարվա համար նախատեսված աշխատանքները կատարելուց հետո՝ գնահատման առաքելության և երկրի կողմից ներկայացված զեկույցների ուսումնասիրության արդյունքում: Սովորաբար այդ զեկույցները ներկայացվում են աշխատանքների կատարմանը հաջորդող տարվա առաջին և երկրորդ կիսամյակների ընթացքում և փոխանցվում են պետական բյուջե մինչև տվյալ տարվա ավարտը, եթե կառավարության կողմից ներկայացվել է համապատասխան վճարման պահանջագիր: Այսինքն՝ օրինակ, բյուջետային աջակցության ծրագրով 2017 թվականին իրականացման համար նախատեսված աշխատանքների դիմաց (եթե տվյալ աշխատանքները կատարվել են), ՀՀ պետական բյուջե փոխանցումը կատարվում է 2018 թվականի ընթացքում: Այլ կերպ ասած՝ 2017 թվականին նախատեսված գումարները արտացոլվում են միայն 2018 թվականի բյուջեում:

Սույն զեկույցի Աղյուսակ 1-ում պատկերը ներկայացված է այլ, պետական բյուջեի կանխատեսումների տրամաբանությամբ: Այսինքն՝ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեն մշակելիս, կառավարությունը հաշվի է առնում նաև ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերով ակնկալվող գումարները (հիմք ընդունելով ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերով նախատեսված տրանշները՝ ըստ տարիների): Օրինակ, 2017 թվականի բյուջեն կազմելիս, կառավարությունը նախատեսում է նաև 2016 թվականին ԵՄ բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված աշխատանքների 100% կատարման դիմաց սպասվելիք վճարումը (որը, ըստ ընթացակարգերի, պետք է կատարվի 2017 թվականին): Ուստի, աղյուսակում «նախատեսված» և «փաստացի» սյունակերում ներկայացված են տվյալ տարվա բյուջեով կատարված կանխատեսումը և տվյալ տարում ԵՄ կողմից կատարված փաստացի վճարումը:

2016-2020 թվականների ընթացքում ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերով նախատեսված էր ընդհանուր առմամբ 120.5 մլն եվրո գումարի բյուջետային աջակցություն, որից 37.2 մլն-ը՝ հաստատուն տրանշի տեսքով և 83.3 մլն եվրոն՝ փոփոխական տրանշի տեսքով: Այս գումարներից, նշված ժամանակահատվածում, ստացվել է 76.095 մլն եվրո գումար, որից 37.2 մլն եվրոն՝ որպես հաստատուն տրանշ, իսկ մնացյալ մոտ 38.9 մլն եվրոն՝ որպես փոփոխական տրանշ: Ինչպես արդեն վերը նշվել էր, փոփոխական տրանշը հատկացվում է բյուջետային աջակցության ծրագրերով նախատեսված բարեփոխումների դիմաց, եթե երկրի կողմից ներկայացված

կատարողական զեկույցները և անկախ փորձագիտական գնահատականները հիմք են ստեղծում այդ գումարների տրամադրման համար:

Աղյուսակ 1. ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերով նախատեսված և ՀՀ պետական բյուջեին հատկացված գումարները 2016-2020 թվականներին (մլն եվրո)

	ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհներ	2016թ.				2017թ				2018թ			
		Նախատես-ված		Փաստացի ստացված		Նախատես-ված		Փաստացի ստացված		Նախատես-ված		Փաստացի ստացված	
		Հաստատուն	Փոփոխական	Հաստատուն	Փոփոխական	Հաստատուն	Փոփոխական	Հաստատուն	Փոփոխական	Հաստատուն	Փոփոխական	Հաստատուն	Փոփոխական
1	*COVID-19 համավարակի դիմակայման Հայաստանի պայմանագիր*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	*Աջակցություն Հայաստանում արդարադատության համակարգի բարեփոխումներին - փուլ 1*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	*Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում*	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	-
4	*Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր*	-	-	-	-	-	-	-	-	-	3	-	-
5	*Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար*	-	-	-	-	-	-	-	-	-	1.5	-	-
6	*Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը*	4.2	-	4.2	-	-	2.5	-	-	-	5	-	-
7	*Աջակցություն գյուղատնտեսության և գյուղի զարգացմանը - Հայաստանի Հանրապետությունում Գյուղատնտեսության և գյուղի զարգացման եվրոպական հարևանության ծրագիր*	-	7	-	7	-	7	-	7	-	-	-	-
8	*Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին - փուլ 2*	-	7	-	2.975	-	7.8	-	-	-	-	-	-
9	*Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին - փուլ 2*	-	10	-	9.5	-	-	-	-	-	-	-	-
	ԸՆԴՀԱՆՈՒՐ	***4.2***	***24***	***4.2***	***19.475***	***-***	***17.3***	***-***	***7***	***-***	***11.5***	***-***	***-***
	Նախորդ տարիների համար պլանավորված գումար, որը ստացվել է տվյալ տարում				***3.75***								

	ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհներ	2019թ				2020թ				2021թ	
		Նախատես-ված		Փաստացի ստացված		Նախատե-սված		Փաստացի ստացված		Նախատես-ված	
		Հասարակություն	Փոփոխական	Հասարակություն	Փոփոխական	Հասարակություն	Փոփոխական	Հասարակություն	Փոփոխական	Հասարակություն	Փոփոխական
1	*COVID-19 համավարակի դիմակայման Հայաստանի պայմանագիր*	-	-	-	-	24	-	24	-	-	6
2	*Աջակցություն Հայաստանում արդարադատության համակարգի բարեփոխումներին - փուլ 1*	-	-	-	-	9	-	9	-	3.6	5.8
3	*Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում*	-	6.5	-	-	-	3.5	-	-	-	0.245
4	*Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր*	-	2.5	-	-	-	2.5	-	-	-	0.250
5	*Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար*	-	3	-	-	-	8.5	-	-	-	0.425
6	*Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը*	-	4	-	-	-	-	-	-	-	2
7	*Աջակցություն գյուղատնտեսության և գյուղի զարգացմանը - Հայաստանի Հանրապետությունում Գյուղատնտեսության և գյուղի զարգացման եվրոպական հարևանության ծրագիր*	-	-	-	-	-	-	-	-	-	-
8	*Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին - փուլ 2*	-	-	-	-	-	-	-	-	-	-
9	*Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին - փուլ 2*	-	-	-	-	-	-	-	-	-	-
	ԸՆԴՀԱՆՈՒՐ	***-***	***16***	***-***	***-***	***33***	***14.5***	***33***	***-***	***3.6***	***14.72***
	Նախորդ տարիների համար պլանավորված գումար, որը ստացվել է տվյալ տարում				***8.04***			***35.63***	***1.75***		

Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏՀԶԱԿ թիմի ուսումնասիրություններ

Առկա տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվում է, որ 2016-2020 թվականների ընթացքում չի կատարվել նախատեսված բարեփոխումների զգալի մասը: Փորձենք հասկանալ պատկերը՝ ըստ տարիների, թե որ ծրագրերով նախատեսված բարեփոխումներ չեն իրականացվել և հիմք հանդիսացել տվյալ տարում դրանց գումարների չստացման համար:

2016 թվականին ՀՀ պետական բյուջե էր նախատեսվում մուտքագրել 28.2 մլն եվրո գումար, որից 4.2 մլն-ը՝ որպես հաստատուն տրանշ և 24 մլն-ը՝ փոփոխական: Այս նախատեսված գումարից, կատարված աշխատանքի դիմաց, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 23.675 մլն եվրո գումար (4.2 մլն՝ հաստատուն տրանշ և 19.475 մլն եվրո՝ փոփոխական տրանշ)՝ նախատեսվածից մոտ 4.5 մլն եվրո պակաս: Եվս 3.75 մլն եվրո մուտքագրվել է 2015 թվականին ակնկալվող գումարներից:

2017 թվականին նախատեսված 17.3 մլն եվրոյից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել միայն յոթ միլիոնը: Ընդ որում, թեև կատարվել էր որոշակի աշխատանք բոլոր նախատեսված ծրագրերով, Եվրոպական հանձնաժողովը հատկացնում է կատարված աշխատանքի միայն մի փոքր մասը՝ մյուս մասի վճարումը հետաձգելով մինչև 2018 թվական: Չստացված գումարներն առնչվում էին երկու ծրագրերի՝ «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» (2.5 մլն եվրո) և Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին - փուլ 2 (7.8 մլն եվրո), որոնց վճարումները հետաձգվել էր մինչև 2018 թվական:

Այս վճարման հետ կապված աշխատանքների կատարումը համընկնում էր այն ժամանակահատվածի հետ, երբ երկրում կատարվում էին կառավարման համակարգի բարեփոխումներ՝ անցում նախագահական համակարգից պառլամենտական համակարգի, սահմանադրության փոփոխություններ, ինչը ենթադրում էր որոշակի մոտեցումների և նախկինում պլանավորված բարեփոխումների վերանայում և փոփոխություն: Մասնավորապես, «Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին - փուլ 2» բյուջետային ծրագրով նախատեսվում էր ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի բարեփոխում, ինչը ենթադրում էր նաև օրենսդրական փոփոխություններ: 2017 թվականին, երբ նախապատրաստվում էր ՀՀ Սահմանադրության նոր տեքստը և մշակվում էր պետական կառավարման համակարգի փոփոխություններ, քաղաքացիական ծառայության համակարգի բարեփոխումները պետք է համապատասխանեին այդ փոփոխություններին, ինչը կատարվեց արդեն 2018 թվականին:

2018 թվականն աչքի է ընկնում երկրում կատարվող զգալի փոփոխություններով, ինչն իր հերթին հանգեցնում է պետական կառավարման մարմինների վերափոխումների և աշխատակազմի փոփոխությունների: Արդյունքում, 2018 թվականին ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերից (նախատեսված էր 11.5 մլն եվրո գումար) գումար չի փոխանցվում ՀՀ պետական բյուջե:

Այստեղ անհրաժեշտ է մանրամասնել մի հանգամանք: 2018 թվականին ՀՀ պետական բյուջե պետք է փոխանցվեր նաև 2017 թվականին կատարված աշխատանքների համար նախատեսված վճարումները: Այն աշխատանքների, որոնք կատարվել էին «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» և «Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին - փուլ 2» ծրագրերի շրջանակներում: Սակայն այդպես էլ 2018 թվականին ԵՄ բյուջետային աջակցության մուտքեր չեղան:

Թեև առկա չէ համապատասխան տեղեկատվություն, կարծում ենք, որ սա հիմնականում պայմանավորված է նախատեսված աշխատանքների հետաձգմամբ, կամ կատարված աշխատանքների ոչ հստակ ու պատշաճ ներկայացմամբ: Նոր իշխանության անփույթ աշխատանքի արդյունքում 2018 թվականին ՀՀ պետական բյուջե չմուտքագրվեց նախատեսված գումարները: Մասնավորապես.

- «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ծրագրով, նախատեսված աշխատանքների պատշաճ իրականացման արդյունքում, բյուջե կարող էր մուտքագրվել 2017 թվականին նախատեսվող 2.5 մլն եվրոն և 2018 թվականի համար նախատեսված 5 մլն եվրոն,
- «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում» ծրագրով նախատեսված էր 2 մլն եվրոյի մուտք,
- «Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագրով»՝ 3 մլն եվրոյի մուտք,
- «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրով նախատեսված էր 1.5 մլն եվրո գումարի մուտք,
- «Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին - փուլ 2» ծրագրով դեռևս 2017 թվականից հետաձգված 7.8 մլն եվրոյի մուտք:

Ակնկալվում էր, որ այս գումարները, ի լրումն 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված գումարների, ՀՀ պետական բյուջե կփոխանցվեին 2019 թվականին: Սակայն 2019 թվականի պատկերն այլ էր: Այսպես՝

- «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ծրագրով 2019 թվականին, աշխատանքների պատշաճ իրականացման դեպքում, պետական բյուջե կարող էր մուտքագրվել 2017 թվականին նախատեսված 2.5 մլն եվրոն, 2018 թվականի համար նախատեսված 5 մլն եվրոն և 2019 թվականի համար նախատեսված 4.5 մլն եվրոն (ընդհանուր՝ 12 մլն եվրո): Սակայն արդյունքում մուտքագրվեց ընդամենը 1.5 մլն եվրո, ինչը դեռևս 2017 թվականին ակնկալվող գումարն էր:
- «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում» ծրագրի շրջանակներում, աշխատանքներն ամբողջ ծավալով կատարելու դեպքում, նախատեսվում էր 8.5 մլն եվրոյի մուտք, որից 2 մլն եվրոն 2018 թվականին կանխատեսվող գումարն էր և 6.5 մլն եվրոն՝ 2019 թվականին: Արդյունքում, 2019 թվականին այս ծրագրի շրջանակներում մուտքեր չգրանցվեցին:
- «Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագրով» 2019 թվականին կարող էր բյուջե մուտքագրվել 5.5 մլն եվրո (3 մլն եվրո՝ 2018-ի համար և 2.5 մլն եվրո՝ 2019-ի համար), այնինչ մուտքագրվել է միայն 2.7 մլն եվրո, այն էլ 2018 թվականին նախատեսված գումարից:
- «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրով 2019 թվականին կարող էր ՀՀ պետական բյուջե մուտքագրվել 4.5 մլն եվրո: Սակայն այս ծրագրի շրջանակներում ԵՄ կողմից ոչինչ չփոխանցվեց:
- 2019 թվականին ՀՀ պետական բյուջե փոխանցվեց դեռևս 2017 թվականին ակնկալվող 3.84 մլն եվրոն:

Այսպիսով, 2019 թվականին ՀՀ պետական բյուջե փոխանցվեց ընդամենը 8.04 մլն եվրո, ինչը բաղկացած էր դեռևս 2017 թվականին իրականացված աշխատանքների դիմաց մուտքագրվելիք 5.34 մլն եվրոյից և իրականացված աշխատանքների արդյունքում 2018 թվականին նախատեսված 11.5 մլն եվրոյի դիմաց ստացված 2.7 մլն եվրոյից:

Իսկ 2019 թվականին նախատեսված 16 մլն եվրոյից, փոփոխական տրանշների ներքո նախատեսված բարեփոխումների կատարման արդյունքում, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել միայն 1.75 մլն եվրո, այն էլ 2020 թվականին «Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագրով» նախատեսված աշխատանքների մասամբ կատարման արդյունքում:

Ստացվում է այնպես, որ 2018 և 2019 թվականներին կատարվելիք աշխատանքների դիմաց նախատեսված 27.5 մլն եվրո գումարից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ընդամենը 2.7 մլն եվրո: Իսկ քանի որ նախատեսված գումարները փոխանցվում են

միայն կատարված աշխատանքների դիմաց, ապա պատկերն ամբողջությամբ հասկանալի է:

2020 թվականին իրավիճակն ամբողջությամբ փոխվեց: COVID-19 համավարակը և դրա դեմ պայքարը դարձավ բոլոր երկրների առաջնային խնդիրը, և առկա բոլոր գումարներն ուղղվում էին պայքարի միջոցների ձեռքբերմանն ու միջոցառումների իրականացմանը:

Այս պայքարն արտահայտվեց նաև ԵՄ-Հայաստան հարաբերություններում: COVID-19 համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքները հաղթահարելու նպատակով ԵՄ պատրաստակամություն հայտնեց Հայաստանին հատկացնել 98.5 մլն եվրո գումար, որից 68,5 մլն եվրոն բյուջետային աջակցության տեսքով (ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի 2020թ. սեպտեմբերի 8-ի գրության): 2020 թվականի մարտին ԵՄ-ն հայտարարեց COVID-19 համավարակի հաղթահարման նպատակով Հայաստանին հատկացվելիք ֆինանսական օժանդակության վերաբերյալ, որն իր մեջ ներառում է նաև ընթացիկ աջակցության ծրագրերի վերաձևակերպում[1]:

2020 թվականին ԵՄ-ն COVID-19 համավարակի դեմ պայքարելու նպատակով Հայաստանին հատկացրեց 24 մլն եվրո գումարի բյուջետային աջակցություն: Ավելին, վերաձևակերպելով արդեն իսկ իրականացվող ծրագրերը, հաստատուն տրանշի տեսքով ՀՀ պետական բյուջե փոխանցեց.

- 11.755 մլն եվրո՝ «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում» ծրագրի շրջանակներում չիրականացված աշխատանքների պատճառով դեռևս չօգտագործված 12 մլն եվրո գումարից[2],
- 3.3 մլն եվրո՝ «Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագրից»՝ 2018-2019 թվականներին չստացված և 2020 թվականին նախատեսված գումարներից,
- 12.575 մլն եվրո՝ «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրի 2018-2019 թվականների համար չստացված 4.5 մլն եվրո և 2020 թվականի համար նախատեսված 8.5 մլն եվրո գումարներից,

[1] https://eeas.europa.eu/delegations/armenia/76734/coronavirus-european-union-stands-armenia_en

[2] Համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմից 2020 թվականին ստացված տեղեկատվության՝ «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում» ծրագրով սահմանված գրեթե բոլոր բարեփոխումները (նախապայմանները) չեղարկվել են, և գումարը փոխանցվելու է պետական բյուջե՝ առանց նախապայմանի: Պահպանվել է միայն մեկ նախապայման՝ մոտ 250 հազ. եվրո արժողությամբ, որի վերջնաժամկետ է սահմանված 2021 թվականը:

- 8 մլն եվրո՝ «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին չծախսված 10 մլն եվրոյի մնացորդից[3]:

Այսպիսով, ինչպես կարելի է եզրակացնել տրամադրված տեղեկատվությունից և ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկանքից, 2018-2020 թվականների ընթացքում չեն իրականացվել ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերով նախատեսված բարեփոխումների զգալի մասը, իսկ 2020 թվականին ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարների մեծ մասն առնչություն չունի պայմանավորված և իրականացված բարեփոխումների հետ:

2021 թվականին սպասվում է 14.72 մլն եվրո գումար, եթե իհարկե 2020 թվականին իրականացվել են ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերով նախատեսված նախապայմանները:

3 https://eeas.europa.eu/delegations/armenia/90988/node/90988_hy?fbclid=IwAR3okN0yPbBHtMzZPlT13eiFoOOm2RObqN-w117ZqNs4c1gknZW4HBSULKA

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերոգրյալը և նկատի ունենալով ԵՄ բյուջետային աջակցության առանձնահատկությունները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- Բյուջետային աջակցության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն դրամաշնորհ է, հանդիսանում է գումար, որը վերադարձվող չէ, և տոկոսագումարներ չեն հաշվարկվում: ՀՀ-ԵՄ երկկողմ ձևաչափով որոշված, միջազգային համաձայնագրի կարգավիճակով ստորագրված փաստաթղթերով ստանձնած ՀՀ պարտավորությունների չկատարումը, որն առաջացնում է ՀՀ պետական բյուջեի համար դրամաշնորհային միջոցների կորուստ, ներելի չէ և պետք է գնահատել որպես խիստ բացասական երևույթ:
- Համեմատելով նախորդ տարիների հետ՝ պետք է արձանագրել հետևյալը. կատարողականների դիմաց տրվող գումարները շեշտակի նվազել են, սակայն հատկապես 2020 թվականի ընթացքում նախկին թերի կատարողականների արդյունքում չստացված գումարները՝ համաճարակի իրավիճակով պայմանավորված, հնարավոր են եղել վերաձևակերպել որպես ճգնաժամի դեմ պայքարի աջակցության փաթեթի մաս, որը տրամադրվել է որպես ուղղակի աջակցություն բյուջեին:
- Նոր կառավարությունն այս համաձայնագրերից և դրանով նախատեսված ռեֆորմներից չի հրաժարվել, կնքված համաձայնագրերը չեն դադարեցվել, և հետևաբար, դրանց չիրականացնելը չի կարող բնութագրվել որպես քաղաքական դիրքորոշում:
- Բոլոր չկատարված պարտավորությունները (բարեփոխումները) ըստ էության՝ երկրին բերել են կրկնակի վնաս. նախ՝ ՀՀ պետական բյուջեն այդքան կանխորոշված և պլանավորված դրամական միջոց ժամանակին չի ստացել, երկրորդ՝ չեն իրականացվել այն բարեփոխումները, որոնք բանակցված, համաձայնեցված և ստորագրված են եղել երկկողմ համաձայնագրերի տեսքով և ուղղված են եղել Հայաստանի ամենատարբեր ոլորտներում իրավիճակի բարելավմանը:
- Գործող կառավարությունը հետևողականորեն ավելացնում է ՀՀ արտաքին պարտքը, որն արդեն իսկ անցել է պարտք/ՀՆԱ սահմանված 60 տոկոսի սահմանագիծը և ըստ կանխատեսումների 2021թ. վերջին կարող է մոտենալ ընդհուպ մինչև 70 տոկոսի: Այս պարագայում բարեփոխումների չիրականացման (ստանձնած պարտավորությունների չկատարման) հետևանքով արտաքին բյուջետային **դրամաշնորհային** միջոցները նախատեսված ժամկետին չստանալը ընդամենը «տնային աշխատանքը» չկատարելու պատճառով ընդունելի չի կարող համարվել:
- Կարծում ենք, որ կառավարությունը պետք է վերանայի 2018 թվականից հետո Հայաստանում ԵՄ հետ կատարվող աշխատանքների կազմակերպման և համակարգման ընթացակարգերը, ուշադրության կենտրոնում պահի այս հարցերը,

միջոցներ ձեռնարկի ստանձնած պարտավորությունների կատարումը նախանշված ժամկետներում ապահովելու և պլանավորված միջոցներն ըստ սահմանված ժամանակացույցի ստանալու նպատակով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*